

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԵՄ, ՊԱՏՐԱՍԵՄ, ԿԱՐՈՂ ԵՄ...

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՋԵՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ, ԹԵՐԵԶԱ ԴԻԼԱՐՅԱՆ, ՍԻՐՈՒՇ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ,
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՌՈՒԴԻԿ ԱԼԱԿԵՐԴՅԱՆ

Խորհրդատու՝ ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

EUROPEAN COMMISSION



Humanitarian Aid



ԵՐԵՎԱՆ
ՓՐԻՆԹԻՆՖՈՒՆ 2011

ՀՏԴ 373:351/354:087.5
ԳՄԴ 74.2+67.99(2)1+92
Գ 606

Հեղ՝ Ա. Արնաուդյան, Թ. Դիլբարյան, Ս. Հովհաննիսյան,
Հ. Խաչատրյան, Ռ. Ալավերդյան
Խորհ՝ Հ. Մաթևոսյան

Գ 606 Գիտենմ, պատրաստ ենմ, կարող ենմ...:
Աղետների ռիսկերի նվազեցման ձեռնարկ տարրական դպրոցի աշակերտների համար / Ա. Արնաուդյան Թ. Դիլբարյան և ուրիշ - եր.: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ: Փրինթինֆո, 2011. - 52 էջ:

Գիրք տարրական դպրոցի աշակերտների համար

Սույն գիրքը նախատեսված է տարրական դպրոցի աշակերտների ԱՌՆ (աղետների ռիսկերի նվազեցում) կրթության համար:

Այն բացառապես ուղղված է աշակերտներին՝ հնարավորություն տալով ինքնուրույն իրականացնելու իրենց ուսումնառությունը:

Գիրքը կազմված է երկու բաժնից: Առաջին բաժնում տրված են առաջադրանքներ, վարժություններ, խաղեր և այլ ուսումնական վարժանքներ, որոնց հրահանգները պարզ ու մատչելի են աշակերտներին: Նրանք կարող են հեշտությամբ հաղթահարել դրանք՝ անհրաժեշտության դեպքում միայն դիմելով ուսուցիչներին կամ մեծահասակներին:

Գրքի երկրորդ՝ «Կարդա ու տես, թե ինչեր գիտի Ամենահաս Դավիթը...» բաժնին ընդգրկում է հետաքրքիր ու կարևոր տեղեկություններ, նյութեր բնական տարբեր երևույթների, դրանց կանխարգելման և հետևանքների նվազեցման մասին: Այս բաժինը ևս նախատեսված է աշակերտների ինքնուրույն ընթերցանության համար:

Ձեռնարկը երաշխավորված է գործածության << կրթության և գիտության նախարարության կողմից:

ՀՏԴ 373:351/354:087.5
ԳՄԴ 74.2+67.99(2)1+92

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԲԱԺԻՆ

- 1. ՆԱԽ ԾԱՆՈԹԱՆԱՆՔ *Ներածական խոսք*..... 4
- 2. ԵՐԿՐԱՇԱՐԺՆ ԵՄ *Ոտանավոր, առաջադրանք*..... 5
- 3. ՄԱՐԳ, ՏՈՒՆ, ԵՐԿՐԱՇԱՐԺ *Շարժախաղ* 10
- 4. ԱՐԱԳ ԵԼՔ ԼԱԲԻՐԻՆԹՈՍԻՅ *Շարժախաղ* 11
- 5. ԻՆՉ ԱՆԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ *Մնջախաղ* 13
- 6. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՅ *ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ Մնջախաղ*..... 16
- 7. ԳՐԱՏԱԽՏԱԿ *Վարժանք*..... 17
- 8. ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ..... 18
- 9. ԱՅՍ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՈՒՍԱԿԸ 20
- 10. ԳԻՏԵ՞Ք ԱՐԳՅՈՔ ԱՅՍ ԿԱՆՈՆԵՐԸ 21
- 11. ԱՆՎՏԱՆԳ ԽՈՀԱՆՈՅ *Խաղ առաջադրանք* 26
- 12. ՊԱՏՄՈՒՄ Է ԱԿԱՆԱՏԵՍԸ *Առաջադրանք*..... 27
- 13. ՊԱՏՄՈՒՄ Է ԱՄԵՆԱՀԱՍ ԴԱՎԻԹԸ, ՈՐՆ ԱՄԵՆ ՏԵՂ Է *Առաջադրանք*..... 29
- 14. ՀԵՔԻԱԹ ՉԱԽ-ՉԱԽ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՔԱԶ ՀՈՎԻԿԻ ՄԱՍԻՆ *Առաջադրանք*..... 33
- 15. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ..... 35

II ԲԱԺԻՆ

- 16. ԿԱՐԴԱ ՈՒ ՏԵՍ, ԹԵ ԻՆՉԵՐ ԳԻՏԻ ԱՄԵՆԱՀԱՍ ԴԱՎԻԹԸ 39
- ԲՆԱԿԱՆ ՀՐԴԵՀՆԵՐ 40
- ԶՐՀԵՂԵՂ 42
- ՍԵԼԱՎՆԵՐ 44
- ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ 45
- ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ: ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 47
- ԿԱՅԾԱԿ 49
- ՍՈՂԱՆՔՆԵՐ 50

Նախ՝ Ժանութանանք

Ես Դավիթն եմ, այն էլ՝ Ամենահաս: Գիտեմ,
անունս մի քիչ անսովոր է, բայց դու նման հերոսների
շատ ես հանդիպել: Խոսե՞նք նրանց մասին և հիշենք,
թե նրանք ինչեր կարող են անել.



Հիմա, ինչո՞ւ, ես ու դու էլ չենք կարող այդքան ուժեղ, ճարպիկ, հնարա-
միտ, բարի և բոլորին օգնելու պատրաստ լինել: Մի զարմանալի ընկեր էլ ու-
նեն, անունը՝ Աղետիկ: Նրա մասին բանաստեղծություններ և մուլտֆիլմեր շատ
կան: Նրա հետ էլ ծանոթանալու համար կարդա ոտանավորներն ու դիտիր ֆիլ-
մերը*:

* Համլետ Մաթևոսյան, «Խաղս կատակ չհամարես», Լուսաբաց հրատարակչություն, Երևան 2005:
Համլետ Մաթևոսյան «Աղետիկը և երկրաշարժը», տեսաֆիլմ, 2004թ.:

ԵՐԿՐԱԾԱՐԺՆ ԵՄ

Ո՞վ եմ, ի՞նչ եմ՝
Ես չգիտեմ,
Ինքս բարի
Իմ բնույթով
Դերասան եմ:
Ես սիրում եմ
Խաղաղ դերեր՝
Մե՛կ երկրաշարժ,
Մե՛կ ջրհեղեղ,
Մե՛կ էլ՝ վթար,
Կամ դեր մի այլ:

Ես չգիտեմ՝
Ո՞նց է լինում,
Ինչին դիպչում՝
Մի փորձանք եմ
Հետս բերում,
Դրա համար
Ինձ բոլորը
ԱՂԵՏԻԿ ԵՆ
Միշտ անվանում:
Մեղքս ձեզմից
Ի՞նչ թաքցնեմ,
Ես պստիկ եմ

Ու շատ փոքրիկ,
Բայց դե ուժս
Մեծ է սաստիկ:
Ինչ դերեր էլ
Որ խաղում եմ,
Ամեն անգամ
Չարմանում եմ՝
Այսքան սխալ
Գործեր անում,
Մարդը հանգիստ
Ո՞նց է քնում:

Առաջադրանք 1

Փորձիր նկարել մեր նոր ծանոթին:

Առաջադրանք 2

- Ընթերցի՛ր ոտանավորի նշված հատվածը և կազմի՛ր բնակարանի անվտանգ կահավորման կանոնների, պահանջների ցանկ:


Այ, օրինակ՝
Մեկը բերել,
Լեռան լանջին
Տուն է շինել,
Լեռն էլ կարգին
Մի լեռ լինի,
Լանջին դիպչեմ՝
Ցած կսահի:
Ախր մարդը
Ո՞նց չգիտի՝
Երկրաշարժը
Առանց հեղեղ,
Առանց հրդեհ,
Առանց սողանք,
Կամ էլ ուրիշ
Մի հետևանք,
Ո՞նց կլինի:
Կամ էլ նայիր
Ի՞նչ է արել,
Մարդը բերել
Պահարանը
Տեղադրել է
Դռան ետև,
Եթե բան է՝
Կատակ անեմ
Ու ցանկանամ
Հետը խաղալ,
Պահարանը
Հանկարծ շուռ տամ,
Դուռը երբեք

Ներս չի բացվի,
Էլ այդ մարդը
Երկրաշարժից
Ո՞նց կփախչի:
Ասա՝ ա՛յ մարդ,
Մի մեխ չունե՞ս՝
Պահարանդ
Պատին խփես,
Ի՞նչ կլինի՝
Պահարանդ
Դու դռներից
Հեռու դնես:
Մի անգամ էլ,
Երբ երկրաշարժ
Ես խաղացի,
Թաքուն եկա
Մեկի տունը
Հանկարծ մտա,
Խիստ զարմացա.
Որքան ծանր
Իրեր կային,
Պահարանի
Վրա էին,
Կամ էլ պատի
Դարակների
Վրա շարված:
Ինչքան զգույշ
Ես շարժվեցի,
Ծանր մի իր
Ցած զցեցի,

Ներքև ընկավ
Թույլ ամրացված
Հսկա մի ջահ,
Մահձակալից
Վերև կախված
Մի մեծ նկար,
Է՛լ ջրաման,
Է՛լ սափորներ,
Հազար գույնի,
Տարբեր գրքեր,
Առաստաղից
Ծեփի կտոր,
Փշու՛ր-փշու՛ր
Ապակիներ,
Դե մի խոսքով՝
Սողո՛մ-Գոմո՛ր:
Իբր քիչ էր
Այս ամենը,
Մեկն էլ բերել
Մահձակալը
Պատուհանի
Մոտ էր դրել
Ու վերևում
Ջահ էր կախել.
Հազիվ ինքս
Ինձ զսպեցի,
Մահձակալը
Պատուհանից
Չզցեցի:

- Ըստ այդ ցանկի ուսումնասիրի՛ր և դիտարկի՛ր ձեր բնակարանի, դասասենյակի կահավորումը:
- Արդյունքների մասին խորհրդակցի՛ր ծնողներիդ և ուսուցչիդ հետ, անհրաժեշտության դեպքում միասին վերադասավորումներ կատարե՛ք:

Այստեղ կարող ես նկարել:




Առաջադրանք 3.

- Ընթերցի՛ր ոտանավորի նշված տները և կազմի՛ր երկրաչարժի դեպքում բազմաբնակարան շենքերում մարդկանց ձիշտ վարքի կանոնների ցուցակը:
- Քննարկի՛ր այն ընկերներիդ հետ:

Խառնաշփոթ
 Այդ վիճակում
 Մարդը կանգնել՝
 Ինձ էր նայում,
 Քիչ էր մնում
 Ես իմ դերը
 Մոռանայի,
 Նրան առած,
 Մահձակալի
 Կամ սեղանի
 Տակ մտնեի:
 Իմ կատակի
 Այդ թեժ պահին,
 Վերին հարկից
 Դուրս են փախչում,
 Աստիճանով
 Ներքև վազում:
 Մեկը չկա
 Մարդկանց ասի՝
 Այդ վանդակը,
 Աստիճանը
 Ձեր կշիռը
 Ո՞նց կպահի,
 Չէ՞ որ ես էլ
 Ամբողջ շենքը,
 Վարից մինչև
 Վերին հարկը,
 Տեղից շարժում

Ու ցնցում եմ:
 Վերին հարկում
 Ամեն ապրող
 Լա՛վ իմանա,
 Որ իր տանը
 Եթե մնա,
 Շատ դեպքերում
 Բան չի լինի,
 Ու անվնաս
 Նա կմնա:
 Ես հո գիտեմ՝
 Ինչ անվտանգ
 Տեղեր ունեն
 Վերին հարկի
 Սենյակները,
 Ա՛յ, օրինակ՝
 Լողասենյակ,
 Այդ սենյակում
 Մետաղյա տաշտ,
 Կամ էլ, ասենք,
 Կրող պատեր,
 Այդ պատերում
 Դռան խռոչ,
 Կամ էլ սյուներ,
 Հենասյունի
 Մոտ անկյուններ,
 Նման ձևով
 Հազար տեղեր:

Բա որ շենքից
 Դուրս են փախչում,
 Տեսնե՛ս՝ իրար
 Ոնց են հրում,
 Իրար բոթում
 Ու խառնվում,
 Մուտքի շուրջը
 Խցան սարքում:
 Հասկանո՞ւմ ես
 Ինչ կլինի,
 Եթե մուտքի
 Վերին մասի
 Ծածկը փլվի:
 Ասել կուզեմ՝
 Վերին հարկում
 Ապրողները
 Պետք է մնան
 Սենյակներում,
 Ներքին հարկում
 Ապրողները
 Պետք է փախչեն
 Պատուհանից
 Կամ դռներից:
 Ի՞նչ է մնում,
 Որ մարդ անի՝
 Ապրած տունը
 Լավ ձանաչի:



ՄԱՐԴ, ՏՈՒՆ, ԵՐԿՐԱՇԱՐԺ

Նարժախաղ

Խաղի նպատակը

Դուք կսովորեք՝

- ըստ հրահանգի գործել և համաձայնեցված գործողություններ կատարել, արագ կողմնորոշվել,
- ցուցաբերել դիտողունակություն, ճարպկություն, արագաշարժություն (կարողություններ և որակներ, որոնք անհրաժեշտ են վտանգավոր իրավիճակներում):

Խաղի ընթացքը

Մասնակիցներից մեկն ընտրվում է խաղավար, մյուսները բաժանվում են եռյակների: Եռյակում երկուսը կանգնում են դեմ առ դեմ, բռնում միմյանց ձեռքերը՝ նրանք «տունն են», երրորդը կանգնում է «տան» մեջ, նա էլ տան բնակիչն է՝ «մարդը»:

Երբ խաղավարն ասում է «տուն», բոլոր «տներն», առանց ձեռքերն անջատելու, լքում են իրենց բնակչին, (մարդը մնում է տեղում կանգնած) և վազում են փնտրելու նոր բնակիչ, նոր «մարդ»: Տունը վերջինիս ներառում է իր մեջ, և ստեղծվում է նոր եռյակ:

Երբ խաղավարն ասում է «մարդ», բոլոր բնակիչները թողնում են նախկին բնակարանը («տները» մնում են անշարժ) և վազում են փնտրելու իրենց համար նոր «տուն»: Արդյունքում ստեղծվում են նոր եռյակներ:

Երբ խաղավարն ասում է «երկրաշարժ», «տները» անջատվում են, բոլոր մասնակիցները վազում են և ստեղծում նոր եռյակներ: Խաղավարի խնդիրն է այդ պահին միանալ որևէ եռյակի, իսկ այն մասնակիցը, ով մնում է եռյակից դուրս, դառնում է նոր խաղավարը:

Խաղի կանոնները

- մասնակիցները կարող են գործել միայն հրահանգը լսելուց հետո,
- ամեն անգամ հարկավոր է կազմել նոր մասնակիցներով եռյակներ:

ԱՐԱԳ ԵՎ ԼԱԲԻՐԻՆԹ-ՈՍԻՑ

Նարժախաղ

Խաղի նպատակը

Դուք կսովորեք

- հրդեհից պաշտպանվելու որոշ կանոններ,
- դրսևորել դիտողունակություն, ժամանակի և տարածության մեջ արագ կողմնորոշվել, ինչպես նաև ճարպկություն, արագաշարժություն:

Խաղի ընթացքը

Դասասենյակում* սեղաններից, աթոռներից ստեղծվում է պայմանական լաբիրինթոս: Երեխաները կազմում են երեքից չորս հոգանոց խմբեր: Բոլոր խմբերը հերթով մասնակցում են խաղին: Նրանք նստում են դասասենյակի վերջին նստարաններին և սպասում ուսուցչի հրահանգին: Լսելով ուսուցչի «հրդեհ» հրամանը, խմբի անդամները ձեռքերի ափերով (կամ թաշկինակով) փակում են իրենց քիթը և լաբիրինթոսի միջով, արգելքները շրջանցելով արագ վազում են մինչև գրատախտակ կամ դուռ: Մյուս երեխաները շարքով նստում են ձանապարհից հեռու՝ լաբիրինթոսի եզրագծով և, ուսուցչի հրահանգին զուգահեռ, առանց խոսքի ցուցադրում են «կրակը և ծուխը»: Նրանք նաև հետևում են խմբերի գործողություններին:

1. հաշվում են կատարման ժամանակը և որոշում արագությունը,
2. հսկում են գործողությունների կատարման ձիշտ հերթականությունը,
3. հսկում, որ առարկաները շրջանցելիս մասնակիցները չդիպչեն դրանց: Այս տվյալների հիման վրա էլ ուսուցիչն առաջարկում է որոշել հաղթողներին:

Խաղի մրցութային տարրը կարելի է զարգացնել. լաբիրինթոսի հաղթահարման ժամանակ մասնակիցները պետք է նաև մոտենան դասասենյակում եղած ջրի ծորակին, թրջեն թաշկինակը, դրանով փակեն քիթը և վազեն:

Խաղի ավարտին արդյունքների հիման վրա որոշվում են հաղթող խմբերը:

* Խաղի համար կարելի է ընտրել ցանկացած տարածք (մարզադահլիճ, բակ...): Իհարկե, լավ կլինի խաղը փորձել տարբեր վայրերում և տարբեր արգելքներ (բնական և արհեստական) հաղթահարել:

Խաղի կանոնները

Մասնակիցները՝

- կարող են գործել հրահանգը լսելուց հետո միայն,
- անպայման պետք է վազեն ձեռքի ափով կամ այլ կերպ քիթը փակած,
- սկզբում փակում են քիթը, հետո վազում,
- պետք է առանց դիպչելու շրջանցեն առարկաները:



Խաղից հետո կարելի է կազմակերպել քննարկում, որտեղ մասնակիցները կփորձեն գտնել հրդեհային իրավիճակներին ու անվտանգությանն առնչվող մի շարք հարցերի պատասխաններ: Օրինակ՝

- Ի՞նչն է առավել վտանգավոր հրդեհի ժամանակ:
- Ի՞նչ պետք է անել ուժեղ բոցի և ծխի ժամանակ:
- Ինչո՞ւ չի կարելի թաքնվել սենյակի որևէ անկյունում, սեղանի կամ մահճակալի տակ:



Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Մնջախաղ

Խաղի նպատակը

Դուք կսովորեք.

- շարժումների միջոցով նկարագրել ու ներկայացնել որոշ երևույթներ և նրանց վտանգավոր հետևանքներից պաշտպանվելու եղանակները,
- վտանգավոր իրավիճակներից ելքեր որոնել, արագ կողմնորոշվել և համաձայնեցված գործողություններ կատարել:

Խաղի ընթացքը

Մասնակիցները բաժանվում են երեք խմբի: Բոլոր խմբերն էլ կարդում են քանու, սելավի և հրդեհի վերաբերյալ փոքրիկ նյութեր, որտեղ նկարագրված են վտանգավոր իրավիճակներ և մարդու համապատասխան գործողություններ: Խմբերին տրվում է որոշակի ժամանակ, որպեսզի նրանք պատրաստվեն մնջախաղով ներկայացնելու քանու, հրդեհի և սելավի վերաբերյալ իրավիճակները:

Խմբերը հերթով ներկայացնում են իրավիճակները: Ամեն անգամ յուրաքանչյուր խումբ ներկայացնում է մեկ իրավիճակ: Նշենք, որ ներկայացնող խումբը ընտրում է պատահական իրավիճակ, մյուս խմբի երեխաները պետք է արագ կողմնորոշվեն և համաձայնեցված պաշտպանական գործողություններ կատարեն: Երբ ներկայացնում է, օրինակ, առաջին խումբը, երկրորդ խումբը պատրաստվում է արձագանքել, ներկայացվող վտանգավոր իրավիճակին համապատասխան գործողություններ կատարել: Երրորդ խմբի անդամները հետևում են իրենց ընկերների գործողություններին.

1. հաշվում են կատարման ժամանակը և որոշում արագությունը,
2. հսկում են գործողությունների համապատասխանությունը իրավիճակին,
3. հետևում են գործողությունների կատարման ձիշտ հերթականությանը: Այս տվյալների հիման վրա էլ որոշվում է հաղթող խումբը:

Խաղի կանոնները

- ապահովել խմբի բոլոր անդամների մասնակցությունը խմբային և պաշտպանական գործողությունների ներկայացումներին,
- ներկայացնել բոլոր իրավիճակներն ու նրանց համապատասխան պաշտպանական գործողությունները,
- իրավիճակը և համապատասխան գործողությունները ներկայացնել առանց խոսքի՝ միայն նմանաձայնության և շարժումների միջոցով (մնջախաղ):

Առաջին իրավիճակ. Քամի

Դրսում ուժեղ քամի է: Ծառերը ձոճվում են, որոշներն էլ կհսաթեք վիճակում են: Ավազակույտը կամաց-կամաց օդ է բարձրանում: Ծինության տանիքը ձոճում է, թվում է՝ ուր որ է կպոկվի: Դրսում եղած մարդիկ վազում են տուն, իսկ տան ներսում եղածները փորձում են ամուր փակել պատուհանները:



Ջերմուկի «Չատիկ» մանկապարտեզի սան

Երկրորդ իրավիճակ. Սելավ

Հորդառատ անձրև է տեղում: Հեռվից լսվում է արագահոս ջրի ձայնը, որն աստիճանաբար մոտենում է բնակավայրին: Հասնելով բնակավայր՝ այն քշում, տանում է սելավատարին շատ մոտ կառուցված, բայց արդեն անբնակ տնակը: Այդ տեսնելով՝ մոտակա տներում ապրող մարդիկ պարկերի մեջ արագ ավազ, ամուր նյութեր են լցնում և փորձում հասցնել սելավատարի այն մասը, որտեղից հնարավոր է ջուրը դուրս հորդի:



Ջերմուկի «Չատիկ» մանկապարտեզի սան

Երրորդ իրավիճակ. Հրդեհ

Անահիտի ծննդյան տարեդարձն է: Բոլորը շատ բարձր տրամադրություն ունեն՝ երգում են, պարում: Հասնում է ծննդյան տարեդարձի տորթը կտրելու ժամանակը: Ներս են բերում տորթը, որի վրա վառվում են մոմերը: Երեխաներից մի քանիսը բարձր տրամադրությամբ պարում էին և չնկատեցին տորթի ներս բերելը: Արամի ձեռքը պատահաբար դիպչում է տորթին և վառվող մոմերից մեկն ընկնում է սեղանի մետաքսե սփռոցին: Սեղանի սփռոցը մեծ արագությամբ սկսում է վառվել: Երեխաները արագ փակում են իրենց քիթն ու բերանը և դուրս վազում սենյակից, իսկ Արամը վերցնում է բազմոցի ծածկոցը և գցում վառվող սեղանի վրա:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Մնջախաղ

Խաղի նպատակը

Դուք կսովորեք՝

- քննարկել և շարժումների միջոցով ներկայացնել բնության երևույթներն ու նրանց հետևանքները,
- դրսևորել պատկերավոր և ստեղծագործական մտածողություն, լինել համբերատար և համագործակցել:

Խաղի ընթացքը

Մասնակիցները բաժանվում են 4-5 հոգանոց խմբերի: Խմբերին հրահանգ է տրվում որոշակի ժամանակահատվածում ընտրել և մնջախաղով ներկայացնել բնության որևէ երևույթ (քամի, հրդեհ, սողանք, ջրհեղեղ, երկրաշարժ և այլն) և նրա վտանգավոր հետևանքները: Խմբերն առանձնանում են և պատրաստվում ներկայացումներին: Խրախուսելի են յուրօրինակ որոշումները, ստեղծագործական մոտեցումները: Խմբերը կարող են օգտվել տվյալ պահին ձեռքի տակ եղած առարկաներից, ստեղծել ցուցադրական նյութեր և անհրաժեշտ դետալներ:

Այնուհետև խմբերը հերթով ցուցադրում են իրենց տարբերակները, իսկ մյուսները փորձում են գուշակել: Որքան խումբը հաջող ու պատկերավոր է ներկայացնում իր աշխատանքը, այնքան մյուս խմբերը հաջող գուշակումներ են անում:

Խաղի կանոնները

- խմբի բոլոր անդամները պետք է ընդգրկված լինեն ներկայացման մեջ և որևէ կերպար կամ գործողություն ներկայացնեն,
- իրավիճակը հարկ է ներկայացնել առանց խոսքի՝ միայն նմանաձայնության և շարժումների միջոցով (մնջախաղ),
- խմբերը կռահումներ են անում ներկայացումից հետո միայն:

ԳՐԱՏԱԽՏԱԿ

Վարժանք

Վարժանքի նպատակը

Դուք կսովորեք՝


- առանց խոսքի, շոշափելու միջոցով մտապահել առաջին օգնության հեռախոսահամարները,
- դրսևորել ուշադրություն և կենտրոնացում:

Ընթացքը

Մասնակիցները նստում են մեկ ուղիղ շարքով, մեկը մյուսի ետևից: Վարժանքը կազմակերպողը վերջին մասնակցի թիկունքին մատների հպումով գծագրում է առաջին օգնության հեռախոսահամարները. 101՝ հրշեջ-փրկարար ծառայություն, 102՝ ոստիկանություն, 103՝ շտապ օգնություն, 104՝ գազի սպասարկման ծառայություն: Այդ պատկերը, նույն եղանակով, խմբի մասնակիցները փոխանցում են միմյանց մինչև առաջին մասնակիցը: Առաջին մասնակիցը գրատախտակին գծում է իրեն հասած և իր կռահած պատկերը: Վարժանքը կազմակերպողը ասում է նախնական պատկերը, որը խումբը համեմատում է իր ստացած պատկերի հետ ու ճշտում:

Կանոն

Պատկերները փոխանցելիս բացառվում է խոսքի գործածումը:



ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ*

Գնահատում և պլանավորում

<input type="checkbox"/>	Մենք ընտանիքում ժողով անցկացրեցինք:
<input type="checkbox"/>	Մենք բացահայտեցինք մեր բնակարանի (սենյակների, խոհանոցի և այլն) վտանգավոր տեղերը (պատուհանագոգեր, մեծ ու ծանր առարկաներ, գազօջախներ, ջրատաքացուցիչներ...):
<input type="checkbox"/>	Մենք բացահայտեցինք մեր բնակարանի և շենքի պահուստային ելքերը:
<input type="checkbox"/>	Մենք բացահայտեցինք մեր շենքի հարակից տարածքի վտանգները:
<input type="checkbox"/>	Մենք գիտենք մեր տան պատասխանատու անձի հեռախոսահամարը և աշխատավայրի հասցեն, ում հետ մենք պետք է կապվենք, որևէ անսարքության և վտանգի դեպքում:
<input type="checkbox"/>	Մենք գիտենք, թե տարիանման դեպքում որտեղ պետք է հանդիպենք. շենքում _____ : փողոցում _____ : շենքի տարածքի սահմաններից դուրս _____ :
<input type="checkbox"/>	Բոլոր կարևոր փաստաթղթերի պատճենները մենք պահում ենք տարիանման պայուսակում կամ մեր բնակավայրից դուրս ապրող հարազատների մոտ:
<input type="checkbox"/>	Մենք գիտենք, որ արտակարգ իրավիճակներում հեռախոսից պետք է օգտվել խիստ անհրաժեշտության դեպքում՝ չծանրաբեռնելով և անընդհատ զբաղված չպահելով կապի միջոցները:
<input type="checkbox"/>	Տարեկան երկու անգամ մենք պետք է ընտանեկան խորհուրդ անցկացնենք և ստուգենք մեր պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին:
<input type="checkbox"/>	Մենք պատրաստ ենք ԱՌՆ բնագավառում մեր գործողությունների մասին պատմել ուրիշներին և բոլորին խորհուրդ տալ նույն կերպ վարվել:

* Աղյուսակում վանդակները համարակալված չեն, որպեսզի դուք ազատ լինեք գործողությունների հաջորդականությունը որոշելիս և կարողանաք այնտեղ որոշակի կետեր ավելացնել՝ ելնելով ձեր բնակարանի և բնակավայրի առանձնահատկություններից:

Ֆիզիկական պատրաստություն

<input type="checkbox"/>	Մենք համոզված ենք, որ մեր շենքը (բնակարանը) կառուցվել է սեյսմակայուն շինարարության պահանջներին համապատասխան, այն հետազոտվել է մասնագետների կողմից: Շենքը վերանորոգման կամ ամրացման կարիք չունի:
<input type="checkbox"/>	Մենք շենքը (բնակարանը) պահպանում ենք խոնավությունից և այլ արտաքին ներգործություններից: Շենքը պարբերաբար վերանորոգվում է:
<input type="checkbox"/>	Բարձր և ծանր կահույքը, սարքավորումները, լուսավորող սարքերը և այլ իրերը մենք ամրացրել ենք պատերին, հատակին և առաստաղին, քանի որ ցնցումների ժամանակ դրանք կարող են ընկնել և վնասել մեզ ու մեր ընտանիքի անդամներին:
<input type="checkbox"/>	Մենք փականներ ենք ամրացրել խոհանոցի պահարանների վրա. ապահովել ենք հեռուստացույցի և կենցաղային էլեկտրական առարկաների անվտանգությունը:
<input type="checkbox"/>	Մենք բնակարանում (շենքում) ունենք կրակմարիչ, այն լիցքավորում ենք տարեկան մեկ անգամ և գիտենք դրա օգտագործման ձևն ու կարգը:
<input type="checkbox"/>	Մենք ապահովել ենք ընտանեկան, մշակութային և նյութական արժեքների ու ժառանգաբար փոխանցվող իրերի պահպանությունը:
<input type="checkbox"/>	Մահձակալների մոտ մենք պահում ենք լապտերիկ և մարտկոցներ:
<input type="checkbox"/>	Մենք գիտենք, որ արտակարգ իրավիճակներում չի կարելի լուցկի կամ կրակայրիչ օգտագործել, քանի դեռ չենք համոզվել, որ գազի արտահոսք չկա:
<input type="checkbox"/>	Մենք պաշտպանել ենք մեզ պատուհանների ապակիների ջարդվելու դեպքում առաջացող փշրանքներից՝ ծածկելով ապակիները հատուկ թափանցիկ թաղանթով:

Արձագանքման կարողություններ և հմտություններ

<input type="checkbox"/>	Մենք հավաքել ենք սննդի, ջրի, դեղորայքի անձեռնմխելի պաշար և անհրաժեշտ իրերի հավաքածու տարիանման համար (տարիանման պայուսակ):
<input type="checkbox"/>	Մենք գիտենք, ինչպես փակել գազի, ջրի ծորակները և հոսանքազրկել բնակարանը (շենքը):
<input type="checkbox"/>	Մենք ընտանիքի անդամներով մշտապես մարզվում և աշխատում ենք զարգացնել մեր արագաշարժությունը, դիմացկունությունն ու ձկունությունը:
<input type="checkbox"/>	Մենք մասնակցել ենք արտակարգ իրավիճակներին պատրաստվելու, անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու, պարզ որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու դասընթացների, տիրապետում ենք կամավորական օգնության հմտությունների:

ԱՅՍ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՈՒՍԱԿԸ

Բոլորը լավ գիտեն, որ կան իրեր, որոնց անհրաժեշտությունը շատ մեծ է, երբ արտակարգ իրավիճակ է և մի որոշ ժամանակ բնակարան կամ տուն մտնել չի կարելի:

Առաջադրանք

Դուք ունեք երկու պայուսակ՝ մեծ և փոքր: Մեծ պայուսակի մեջ կարող եք տեղավորել այստեղ պատկերված իրերից 10-ը, իսկ փոքրի մեջ՝ 7-ը: Ընտրե՛ք ամենակարևորները և տեղավորե՛ք պայուսակներում (սլաքներով):



4լ ջուր
օրական 1 մարդուն



դեղորայք
դեղատուփիկ



3 օրվա սնունդ



խոհանոցային
պարագաներ



լապտերիկ



մարտկոցներ



տաք հագուստ



կանխիկ դրամ



սպիտակեղեն
(մերքնագգեստ)



սանիտարահիգիենիկ
պարագաներ



լուցկի



ծածկոց



ԵՍ ԱՄԵՆԱԳԵՏ ԱՍՏՂԻԿՆ ԵՄ ԵԿՍՈՎՈՐԵՆՔ ԵՎ ՊԱՀՊԱՆԵՆՔ ԱՅՍ ԿԱՆՈՆՆԵՐԸ*

Ով իրազեկված է՝ նա պաշտպանված է



Սուր կտրող, ծակող առարկաներով խաղալը բավականին վտանգավոր է, քանի որ դրանք կարող են վնասվածքի պատճառ դառնալ: Դրանք պետք է միշտ գտնվեն իրենց տեղում:

Եթե գտել եք սուր կտրող, ծակող առարկաներ, անպայման դրանք հանձնե՛ք մեծահասակներին, կամ պահե՛ք որևէ ապահով և անվտանգ տեղում:



Հաց, երշիկ կամ այլ մթերքներ կտրատելիս ուշադրությունը մի շեղե՛ք մեկ այլ բանի վրա և մի փորձե՛ք կտրատել սառեցրած մթերք, սպասե՛ք մինչև այն հալչի:



* ԱՒՆ Հայաստանի փրկարար ծառայություն, Կենսապահովման հիմունքներ, արտակարգ գրադարան, «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոն, www.emergency.am, www.ema.am

Օգտվիր միայն այն էլեկտրասարքերից, որոնցից մեծահասակները թույլ են տվել օգտվել:



Մի՛ փորձիր ինքնուրույն նորոգել խափանված էլեկտրասարքերը, մանավանդ, երբ դրանք անջատված չեն հոսանքից:

Չի՛ կարելի մոտենալ կամ ձեռք տալ բաց էլեկտրալարերին: Եթե այն հանկարծակի սկսել է այրվել, անմիջապես զգուշացրո՛ւ մեծահասակներին, ապա զանգահարի՛ր 1-01:



Տնից, անգամ սենյակից դուրս գալիս սովորություն դարձրո՛ւ անջատել բոլոր էլեկտրական սարքերը, լույսը:

Ծաղկամանները մի՛ կախիր հեռուստացույցի, նվագարկչի կամ այլ էլեկտրական սարքերի վրա, քանի որ ջուրը կարող է կաթել և հոսանքահարման պատճառ դառնալ:



Ձեռքդ երբեք չմոտեննա ջրի մեջ, եթե այն տաքանում է էլեկտրատաքացուցիչով: Եվ աշխատի՛ր լողասենյակում էլեկտրասարքեր չմիացնել:



Արդուկը մի՛ վերցրու թաց ձեռքերով և մի՛ արդուկիր՝ հատակին ոտաբորիկ կանգնած: Արդուկի մեջ ջուր լցնելուց առաջ անպայման արդուկն անջատի՛ր հոսանքից:

Տաք արդուկի շուրջը մի՛ փաթաթիր լարը, որովհետև այն կարող է այրվել և հրդեհ առաջացնել:



Խոնավ շորով երբեք չսրբե՛ս հոսանքին միացված հեռուստացույցի էկրանը:

Կոյուղու և լվացարանների մեջ տարբեր առարկաներ և սննդի մնացորդներ մի՛ լցրու, դրանք անպայման խցանումներ կառաջացնեն:





Ապակյա սպասքի, դարակների, հայելիների հետ գործ ունենալիս պետք է հիշել, որ դրանք փխրուն են, հեշտ կոտրվող: Ապակուց ստացված վերքերն ավելի ցավոտ են և ուշ են լավանում:

Ջրից օգտվելուց հետո անմիջապես փակիր ծորակը, անսարքությունների մասին տեղեկացրո՛ւ մեծահասակներին՝ նախապես դույլ կամ խորը թաս դնելով կաթոցի տակ:



Գազի հոտ զգալու դեպքում անմիջապես զգուշացրո՛ւ մեծահասակներին (տան անդամներին, հարևաններին), բացիր բոլոր պատուհանները և օդափոխիր սենյակը: Ստուգիր գազօջախի փականները, եթե բաց են, մեծերի օգնությամբ փակիր և համոզվիր, որ դրանք փակել եք: Անմիջապես զանգահարիր 1-04:

Երբեք առանց մեծահասակների ներկայության մի՛ փորձիր օգտագործել կենացադային քիմիայի միջոցներ (լվացքի փոշի, լվանալու հեղուկներ, ժավել) և դեղորայք): Դրանք հեռու պահիր կրակից ու սննդամթերքից:



Առաջադրանք

Լրացրե՛ք բացթողումները՝ օգտվելով Ամենահաս Դավիթի հուշումից

1. Երբեք և ոչ մի տեղ մի՛ խաղացեք _____ և _____ հետ:
2. Ինքնուրույն մի՛ միացրեք _____, իսկ գյուղական տանը՝ _____:
3. Մի՛ թողեք առանց հսկողության _____ կամ _____:
4. Մի՛ խաղացեք _____, _____ և այլ պայթյունա- և հրդեհավտանգ հեղուկների հետ:
5. Առանց մեծերի հսկողության անտառում _____ մի՛ վառեք:
6. Իսկ եթե հրդեհ է բռնկվել՝ զանգահարե՛ք _____ հեռախոսահամարով:



ԱՆՎՏԱՆԳ ԽՈՂԱՆՈՑ

Նկարում փորձիր գտնել երեխայի համար վտանգ ներկայացնող և հրդեհի պատճառ հանդիսացող և 10-ից ոչ պակաս աղբյուր:



- | | |
|----------|-----------|
| 1. _____ | 6. _____ |
| 2. _____ | 7. _____ |
| 3. _____ | 8. _____ |
| 4. _____ | 9. _____ |
| 5. _____ | 10. _____ |

ՊԱՏՄՈՒՄ Է ԱԿԱՆԱՏԵՍԸ

«Ես ապրում եմ ոչ մեծ քաղաքում, որի կողքով անցնում է մի մեծ գետ: Ինձ դուր էր գալիս ապրել այնտեղ, քանի դեռ չէի առնչվել այնպիսի սարսափելի, վտանգավոր երևույթի հետ, ինչպիսին երկրաշարժն է: Այո, մի զարմացեք:



Դա տեղի ունեցավ վաղ առավոտյան ժամը 8⁰⁰-ին: Ես պատրաստվում էի տնից դուրս գալ: Հենց այդ պահին հատակը կարծես թե սկսեց փախչել ոտքերիս տակից: Բնակարանում ամեն ինչ սկսեց ձոձվել: Թվում էր, թե ապակիները ուր որ է կկոտրվեն: Դռները սկսեցին իրենք իրենց փակվել: Ականջներիս մեջ տան սպասքի ձայնն էր: Դա սարսափելի էր: Ես սաստիկ վախեցա, սկսեցի բղավել, օգնություն կանչել: Ինձ թվում էր՝ ուր որ է ամեն ինչ փլվելու է վրաս: Դուրս եկա բնակարանից, վազեցի դեպի վերելակը: Քանի որ ապրում էի 10-րդ հարկում, փորձում էի իջնել ներքև, բայց վերելակը չէր աշխատում: Ստիպված էի իջնել աստիճաններով: Ինչ-որ կերպ իջա ներքև և դուրս եկա փողոց, որտեղ կատարյալ խուճապ էր տիրում: Չգիտեի ինչ անել, որ կողմ փախչել...

Ես լսել էի, որ երկրաշարժի ժամանակ կարող է նաև սողանք, փլուզում առաջանալ: Սարսափս այնքան մեծացավ, որ գիտակցությունս կորցրեցի: Ուշքի եկա «շտապ օգնության» մեքենայի մեջ, որին կանչել էր հարևանս՝ ինձ գետնին ընկած տեսնելով: Ես գիտեմ՝ այդ երկրաշարժը 9 բալ էր, և ես այն կհիշեմ իմ ողջ կյանքի ընթացքում»:

Առաջադրանք

Վերլուծե՛ք պատմվածքը և նշե՛ք, թե նկարագրված գործողություններից որն է ճիշտ, որն է սխալ սխալ:

Պատասխանները հիմնավորե՛ք:

Վերլուծության տարբերակ

Անվտանգության կանոններից մեկը խուճապի չմատնվելն է, քանի որ հերոսը գտնվում էր 10-րդ հարկում, իմաստ չունեի դուրս գալ շենքից և վազել փողոց: Նման դեպքերում անհրաժեշտ է կանգնել կրող պատերի տակ, հենասյուներով կազմված անկյուններում, դռների որմնախորշերում, պատուհաններից և ծանր առարկաներից հեռու: Երկրաշարժի ժամանակ չի կարելի օգտվել վերելակից, քանի որ վերելակի դռները կարող են ծռնվել և մարդկան համար ծուղակ դառնալ:

Սողանքները և փլուզումները լինում են այնպիսի երկրաշարժերի ժամանակ, որոնց ուժգնությունը 7 բալից ավելի է:

ՊԱՏՄՈՒՄ Է ԱՄԵՆԱՀԱՍ ԴԱՎԻԹԸ, ՈՎ ԱՄԵՆ ՏԵՂ Է

Գյուղի միջով հոսում էր մի փոքրիկ գետակ: Այն-քան փոքրիկ, որ առաջին հայացքից թվում էր, թե այն ոչ մի վտանգ չի կարող ներկայացնել: Գյուղի բնակիչների, երեխաների ամենասիրելի զբաղմունքը գետի ափին խաղալն ու զբոսնելն էր: Սակայն գարնանը, տեղումների ու ձնհալի շրջանում, գետակը սկսել էր վարարել: Այն-քան ջրառատ էր դարձել, որ սկսել էր ափերից դուրս գալ: Եվ ահա մի երեկո գյուղացիները խուճապահար, աղմուկ-աղաղակով դուրս են թափվում տներից: Գետը դուրս էր եկել հունից և, ողողելով ափերը, սրբում, քշում-տանում էր դեմն ընկած ամեն ինչ: Հանկարծ լսվում է մի ձիչ և ուժգին դղրդոց: Գետը, փոխելով հունը, մտել էր գյուղացու հողամասը և քշել-տարել անասնագոմը՝ անասուններով, այնուհետև հասել էր տանը, քանդել տան կեսը: Բարեբախտաբար, մարդկանց չէր վնասել:

Գյուղացիները հուսահատ և անզոր նայում էին տեղի ունեցածին: Նրանցից մի քանիսն էլ աշխատում էին փրկել գույքը, անասուններին, բայց այդ փորձերը ոչ միշտ էին արդյունավետ: Այս դեպքն իմ մեջ տպավորվել է: Ես հասկացա, որ մարդն անկարող է հզոր բնության հանդեպ, բայց նաև համոզվեցի, որ հնարավոր է նվազեցնել և հաղթահարել բնական երևույթների աղետալի հետևանքները նախապես պատրաստվելու և կանխարգելիչ միջոցառումներ կատարելու դեպքում: Օրինակ՝ պատմե՜ք ձեր կառուցում, գետերի հունների և սելավատարների մաքրում, տների և անասնագոմերի կառուցում սելավային և գետերի հուններից հեռու:



Առաջադրանք 3.

Եթե նման դեպքերը հաճախակի են լինում ձեր բնակավայրում, ապա մի հարցաթերթիկ կազմիր և գրուցելով ձեր շրջապատի մեծահասակների, հատկապես տատիկների ու պապիկների հետ՝ տեղեկություններ հավաքիր: Կարող ես թերթ հրատարակել և մարդկանց պատմել քո դիտարկումների և հետազոտությունների մասին:

Առաջադրանք 4.

Ընկերներիդ հետ փորձիր մշակել գործողությունների պլան, որի համաձայն դուք կարող եք իրականացնել շրջակայքը մաքրելու, բարեկարգելու և ԱՌԵ այլ աշխատանքներ:

Ձեր կազմած պլանն անպայման քննարկեք մեծահասակների հետ:

ՀԵՔԻԱԹ ՉԱԽ-ՉԱԽ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՔԱԶ ՀՈՎԻԿԻ ՄԱՍԻՆ

Լինում է չի լինում մի Չախ-Չախ թագավոր է լինում: Նա բարի, ուրախ և անհոգ է լինում: Օրենքներ չի հրապարակում, կանոններ չի ընդունում, և իր երկրում յուրաքանչյուրն անում է այն, ինչ կամենում է: Բոլորը գովաբանում են թագավորին:

Թագավորության շուրջը խիտ անտառ է լինում, որով ոչ ոք չէր կարող անցնել: Մի անգամ այդ անտառում կորչում է մի տղա՝ Հովիկ անունով:

Ամբողջ օրը նա փնտրում է անտառից դուրս գալու ճանապարհը: Նրան զարմացնում է անտառի աղտոտվածությունը ամեն տեսակի կենցաղային և այլ իրերով: Հովիկը որոշում է աղբը հավաքել, փոս փորել, լցնել փոսի մեջ և ծածկել հողով: Իսկ անտառը, ի երախտագիտություն տղային, ցույց է տալիս դուրս գալու ճանապարհը:

Անցնում է Հովիկը Չախ-Չախի թագավորությունով և զարմանում: Մի տեղ երեխաները խարույկ են վառում, իսկ մեծերի պետքը չէ: Մեկ այլ տեղում բարդու բմբուլներն են այրում և ուրախանում: Ուր որ է՝ ցանկապատը կբոցավառվի, իսկ նրանց ոչ ոք չի էլ նախատում: Հարևան տանը վառարանը թողել են առանց ուշադրության...

Չարմանում է Հովիկը և դիմում տեղացիներին.

- Ի՞նչ եք անում, բարի՛ մարդիկ: Չէ՞ որ կարող է հրդեհ բռնկվել:
- Մեզ մոտ օրական 3 հրդեհ է լինում, և ոչինչ: Մեր թագավորը բարի է: Նա մեզ չի հանդիմանում և չի պատժում դրա համար,- ասում է մի պապիկ:

Հովիկը վրդովված շտապում է թագավորի մոտ: Սկսում է համոզել նրան օրենքներ ընդունել և դրանցով արգելել մարդկանց կրակի հետ անզգույշ վարվել: Սակայն թագավորը չէր սիրում, երբ նրան բան էին սովորեցնում: Եվ հրամայում է Հովիկին գցել զնդան: Իսկ ինքը շարունակում է ապրել այնպես, ինչպես ապրում էր:

Գալիս է Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Թագավորության գլխավոր հրապարակում տեղադրում են մի մեծ տոնածառ: Չարդարում են տոնածառը խաղալիքներով և ծաղկաշղթաներով, իսկ ծյուղերի արանքներում մոմեր են վառում: Ամբողջ գիշեր մարդիկ ուրախանում են պալատում, իսկ երբ առավոտյան հոգնած քուն են մտնում, մոռանում են հնգցնել մոմերը: Մեծ հրդեհ է բռնկվում,



Օրվա պլանը.

«Ուշադրություն բոլորին» ազդանշանով ազդարարվում է գործողությունների սկիզբը: Դրանք են՝

- պայմանական հրդեհի դեպքում (դպրոցում, հարևան տանը, այգում, մոտակա ձեռնարկությունում) տարհանման կազմակերպում.
- քիմիական վտանգավոր նյութերի արտանետման կամ հրդեհի դեպքում շնչառական ուղիների պաշտպանություն և տարհանման կազմակերպում.
- փողոցային երթևեկության կանոնների իմացության ստուգում.
- գործողությունները բենզինի, դիզելային վառելիքի, սնդիկի արտահոսքի դեպքում.
- առողջ ապրելակերպի հիմունքների իմացության, հմտությունների ցուցադրություն.
- անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում մաշկի և շնչառական օրգանների պաշտպանության պարզագույն միջոցների օգտագործում (թաց թաշկինակ, գլխաշոր).
- պարզագույն սպորտային մրցույթներ՝ վազքի, ցատկի տարրերով (դպրոցի դահլիճում՝ շվեդական պատի, պարանի և այլ «փրկարարական պարագաների» օգտագործմամբ):

Առաջադրանք 1.

Ընկերներիդ հետ կրկնի՛ր այն վարժությունները, որոնք կատարում է Ամենահաս Դավիթը, այնուհետև հարևան դասարանի թիմի հետ խաղ-մրցույթ կազմակերպի.



Մրցույթի վայրն ընտրելիս (դահլիճ, դասարան, բակ և այլն) մի մոռացե՛ք բակում կամ բնության մեջ (դաշտ, անտառ, գետափ և այլն) կազմակերպելու հնարավորության մասին:

Միջոցառումները շատ հանդիսավոր ու տպավորիչ կլինեն, եթե սկսվեն ու ավարտվեն Հայաստանի Հանրապետության պետական օրհներգով, իսկ դուք անպայման պետք է իմանաք մեր օրհներգի բառերը և ձայնակցեք:





«Երեխաների պաշտպանության օրվա» նախապատրաստական աշխատանքները սկսելիս և արդյունքներն ամփոփելիս անպայման հրավիրե՛ք մեծահասակներին՝ իբրև մասնագետներ և խորհրդատուներ:

Առաջադրանք 2.

Երբ ավարտվեն միջոցառումները՝ ընկերներով քննարկե՛ք, թե ի՞նչ սովորեցիք.

- վտանգավոր առարկաների հետ զգույշ վարվելու և անձանոթ մարդկանց հետ շփվելու վարքականոցներ.
- բնապահպանական գիտելիքներ և բնության հանդեպ խնայողական վերաբերմունք.
- մարդու օրգանիզմի կառուցվածքի մասին գիտելիքներ.
- մարդու ֆիզիկական առողջության ապահովման, պահպանման, առողջ ապրելակերպի մասին գիտելիքներ և հմտություններ.
- բակում, փողոցում, հասարակական տրանսպորտում անվտանգ պահելաձև:



ԿԱՐԴԱ ՈՒ ՏԵՍ, ԹԵ ԻՆՉԵՐ ԳԻՏԻ ԱՄԵՆԱՀԱՍ ԴԱՎԻԹԸ

ԴԱՐՁԻՐ ՆՐԱ ՆՄԱՆ ԳԻՏՈՒՆ, ՃԱՐՊԻԿ, ՃԿՈՒՆ, ԽԵԼԱՄԻՏ ԵՎ ՈՒԺԵՂ, ՈՐՊԵՍՁԻ ԿԱՐՈՂԱՆԱՍ ՕԳՆԵԼ ԻՆՔԴ ՔԵՁ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ



ԲՆԱԿԱՆ ՀՐԴԵՀՆԵՐ

Բնական հրդեհների թվին են պատկանում անտառային, տափաստանային և հացաբույսային զանգվածների, տորֆային և վառելիքային հանածոների հրդեհները:

Անտառային հրդեհն անտառային տարածքի բուսականության անկառավարելի այրումն է, որը տարածվում է տարերայնորեն:

Անտառային հրդեհները լինում են ստորին, վերին (գագաթային) և ստորգետնյա:

Վերին անտառային հրդեհների ժամանակ այրվում են ծառերի պսակները: Տարածվում են ուստյուններով կամ հոծ պատով:

Ստորին անտառային հրդեհների ժամանակ այրվում են վերգետնյա ծածկը, թփերը:

Ստորգետնյա հրդեհի ժամանակ այրվում է գետնից 0,3 մ խորությամբ գտնվող տորֆը:

Անտառային հրդեհների մասշտաբները և տարածման արագությունը կախված են ծառատեսակից, քանու ուղղությունից, ուժգնությունից և այլն:



Անտառային հրդեհի սահմանում առաջանում են ծխապատված գոտիներ, որոնք մարդկանց թունավորում են ածխաթթու գազով:

Անտառային հրդեհների 90%-ի պատճառը մարդկանց անփույթ, անպատասխանատու վարքն է: Անտառային հրդեհ կարող է առաջացնել նաև կայծակը:

Անտառային հրդեհի փոքր օջախը պետք է անմիջապես հանգցնել, որովհետև այն շատ արագ է տարածվում: Դրա համար հրդեհի եզրերը ձաղկում են կամ վրան հող են լցնում և ակոսներ բացում: Ձաղկելու համար օգտագործում են 1-2մ երկարությամբ ձյուղերի խրճեր:

Անտառային հրդեհները բացառելու համար արգելվում է՝

- անտառում վառվող լուցկու կամ ծխախոտի մնացորդ զցել.
- անտառում թողնել դյուրավառ նյութով ներծծված թղթեր և շորի կտորներ.
- արևի տակ ապակու կտորներ թողնել.
- խարույկը թողնել առանց հսկողության:



ՋՐԿԵՂԵՂ

Գարնանը ձնհալքի, տեղատարափ անրձևների հետևանքով գետերում, լճերում, ծովերում ջրի մակարդակը բարձրանում է: Ջրերն ափերից ելնելով՝ ջրածածկ են անում ցամաքի մեծ տարածքներ: Ջրհեղեղ լինում է նաև, երբ գետի հունը փոքրանում է փլվածքների, գետի մեջ աղբ լցնելու և այլ պատճառներով:



Ափերից դուրս եկած ջրերը վնասում, ավերում են տները, շարքից հանում գյուղատնտեսական ցանքերը, ոչնչացնում բերքը: Հնարավոր են նաև մարդկային զոհեր:

Ջրհեղեղներն անվնաս կլինեն կամ աննշան վնաս կհասցնեն, եթե բնակիչները նախօրոք պատրաստվեն դրանց:

Նախ, չպետք է ծառահատել անտառները, որոնք կլանում են մակերեսի ջուրը: Գարնանն անհրաժեշտ է միացյալ ուժերով մաքրել գետի հունը և ամրացնել այն:

Շատ կարևոր է, որ ամեն գարնան ընթացքում ամրացվեն գետերի ափերը: Եթե այս ամենը կատարվի, ապա ջուրը նույնիսկ գարնան հորդացման ժամանակ ափերից դուրս չի գա:



Ջրհեղեղի սպառնալիքի ժամանակ տանը պահե՛ք փրկարարական օղակներ, փչովի խաղալիքներ, պարաններ: Վերին հարկ բարձրացրե՛ք փչացող իրերը: Վտանգավոր նյութերը տեղափոխե՛ք անվտանգ վայր: Ամուր փակե՛ք դռները և լուսամուտները: Ջրհեղեղի ժամանակ խուճապի մի մատնվե՛ք:

Բարձրացե՛ք վերին հարկերը, ծառերի վրա կամ լանջն ի վեր: Ձեր մասին տեղեկացրե՛ք ձայնային ազդանշանով, գուճավոր շոր բարձրացնելով: Իսկ եթե ջրի մեջ եք հայտնվել, լողալով կամ լողամիջոցների օգնությամբ շտապ հասե՛ք մոտակա ափ:

ՍԵԼԱՎՆԵՐ



Սելավները ջրի ուժեղ հոսանքներ են, որոնք իրենց հետ տանում են հող և քարաբեկորներ:

Սելավները լինում են լեռնային տարածքներում:

Սելավները սովորաբար առաջանում են հանկարծակի և տևում մի քանի ժամ: Դրանք սովորաբար առաջանում են հետևյալ ձևով: Տեղատարափ անձրևի, ձնհալքի ջրերը լեռնային շրջանի վերին մասում լվա-

նում են գետնի մակերեսը՝ անջատելով հող, փոքր քարեր և նույնիսկ հսկա քարաբեկորներ: Առաջացած ջրի, ցեխի, քարի զանգվածը մեծ արագությամբ վար է հոսում: Այս հուժկու հոսանքը ձանապարհին ավերում է տներ, կամուրջներ, շուռ տալիս ծանր առարկաներ: Ջրացեխաքարային զանգվածը, աստիճանաբար իջնելով վար՝ դեպի հովիտ, նստում է, պատում, ծածկում ցածրադիր մասերը: Շարքից դուրս են գալիս գյուղատնտեսական ցանքերը, վնասվում տները, կառույցները: Բերվածքները նստում են նաև գետի հատակին:

Սելավների կանխարգելման համար անհրաժեշտ է ավապաշտպան շինվածքների և լեռնային առուների կառուցում, գետերի հունների պարբերական մաքրում, պատերի ամրացում, ավազանների անտառապատում:

Բնակչությունը պետք է իմանա, որ սելավների առաջացմանը նպաստում են լանջերի ինքնակամ կառուցապատումները, դրանց հերկումը, ոչխարների արածեցումը (ոչխարներն իրենց նեղ սմբակներով փխրեցնում են լանջի մակերևույթը), սելավատար հունների փակումը:

Չի կարելի աղտոտել սելավատարները, նեղացնել հունները, ամեն սելավից հետո հունը պետք է մաքրել սելավային բերուկներից և աղբից:

Սելավի ժամանակ պետք է հետևել ազդարարման նշաններին, խուսափել սելավավտանգ հատվածներով երթևեկելուց, արագ տեղափոխվել անվտանգ վայրեր (ջրաբաժանների բարձրադիր տեղեր և այլն):

ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ

Քամիները էական դեր են կատարում մոլորակի կյանքում: Դ՛անչ շնորհիվ տեղի է ունենում խոնավության և ջերմության փոխանակում մթնոլորտի և երկրի միջև:

Արևը պտտվող երկրագունդը տաքացնում է անհավասարաչափ: Ավելի ցուրտ բևեռներից սառն օդը շարժվում է դեպի տաք հասարակած: Դա էլ հենց քամին է: Քամին հաճախ ուղիղ չի շարժվում, որովհետև դրան խանգարում են երկրի ռելիեֆը և այլ գործոններ:

Քամիների թվում են փոթորիկը, մրրիկը, մրրկասյունը, պտտահողմը, փոթորկանքը:

Փոթորիկը և մրրիկը զգալի ավերածություններ են գործում, շուռ են տալիս թույլ տանիքները, ծառերը, սյուները, պոկում էլեկտրական լարերը:

Ուժեղ քամիների ժամանակ պետք է՝

- դուրս չգալ տնից.
- ամուր փակել լուսամուտները և դրանցից հեռու մնալ.
- դրսում գտնվելիս հեռու մնալ շենքերից, պաշտպանվել փոսերում, առվակներում
- հեռու մնալ էլեկտրասյուներից և էլեկտրալարերից.
- դուրս գալ փոխադրամիջոցներից և շուտ մտնել մոտակա նկուղ, ապաստարան կամ որևէ շենք:

Ձարմանահրաշ երևույթ է մրրկասյունը (տորնադո, տրոմբ): Կուտակաանձրևային ամպերից պտտահողմային ամպը ցած է կախվում ձագարի ձևով և սյան կամ կնճիթի թևով հասնում գետին: Այն սկսում է շարժվել գետնի վրայով տրորելով այն:



Ձագարի ներսում օդը նոսր է (ձնշումը փոքր է), որի շնորհիվ կլանում է իր ձանապարհին հանդիպածը: Վերջիններս կարող են տեղափոխվել շատ երկար տարածություններ:

Մրրկասյունների ժամանակ զարմանալի դեպքեր են տեղի ունենում: Մոսկվայի մարզի գյուղերից մեկին է մոտենում սև ամպ: Սկսվում է ամպրոպ, ուժեղ անձրև: Երեխաների գլխին թափվում են 1000-ից ավելի հին մետաղադրամներ: Հետագայում պարզվել է, որ դրանք մրրկասյան ձագարը ներծծվել է այդտեղից հեռու գտնվող, ոչ խորը թաղված գանձից և բարձրացրել է ամպ:

Մրրկասյունների ժամանակ պետք է շուտ մտնել մոտակա շենք: Դաշտում գտնվելիս ծիշտ է մոտակա քարայրներ, նեղ փոսորակների մեջ մտնելը:



* «Պետք է իմանալ» մանկական նկարապատումների հավաքածու, «Լոռէ» փրկարարական ջոկատ հասարակական կազմակերպություն և gtz, էջ 10, 11:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻՑ

Երկրաշարժերն առավել վտանգավոր երևույթներ են, դրանք լիովին ավերել են բնակավայրեր, պատմական հուշարձաններ, քաղաքներ:

Երկրաշարժից անբողջությամբ քանդվել է Հին Հայաստանի մայրաքաղաք Դվինը (893թ.), իսկ 1319թ. էապես տուժել է Հայաստանի մյուս մայրաքաղաք Անին:



Ինչպես գիտենք, Երկիրը գնդաձև մարմին է, որի արտաքին շերտը քարոլորտն է: Այն ունի 75-150 կմ հաստություն: Քարոլորտը շատ ամուր է, բայց բաժանված է առանձին մասերի (սալերի):

Քարոլորտի տակ բարդ երևույթներ են տեղի ունենում: Դրա հետևանքով քարոլորտի սալերը միմյանց նկատմամբ աննշան տեղաշարժվում են: Սալերի առձակատման հետևանքով ապարների սահքեր, լանջերի սողանքներ են տեղի ունենում: Քանդվում են վատ, անորակ կառուցված շենքերը: Լինում են բազմաթիվ զոհեր և վիրավորներ:

Երկրաշարժերից բնակչության պաշտպանության համար առաջին հերթին շենքերը պետք է կառուցվեն որակով: Շահագործման ժամանակ այդ շենքերը ինքնազուլուխ ձևափոխել չի կարելի: Կարևոր նշանակություն ունի նաև մարդկանց պահելաձևը երկրաշարժից առաջ և հետո:

Երկրաշարժից առաջ.

- բնակավայրի մուտքը, միջանցքը չբեռնավորել ծանր առարկաներով,
- մահձակալները դնել պատուհաններից հեռու,
- պատերից ծանր իրեր չկախել,
- նախօրոք որոշել, թե երկրաշարժի դեպքում որ ուղիով արագ դուրս գալ տնից (դռնից կամ Յմ բարձրության լուսամուտից),
- նախապես պայմանավորվել երկրաշարժից հետո ընտանիքի հանդիպման վայրը,
- ձեռքի տակ ունենալ ձեռքի լապտերիկ:

Երկրաշարժի ժամանակ.

- ցնցման ժամանակ, 1-ին կամ 1,5 հարկում գտնվելու դեպքում, արագ դուրս գալ նախօրոք որոշված ուղիով,
- չօգտվել աստիճաններից և վերելակից,
- անջատել էլեկտրականությունը և գազը,
- շենքի բարձր հարկերում գտնվելիս շտապ բացել մուտքի դուռը, որ այն չփակվի, լուսամուտից հեռու մնալ, կանգնել դռան որմնախորշում կամ հենասյուների մոտ: Գլխին պահել հաստ գիրք:



ԿԱՅԾԱԿ

Կայծակը ամպերի միջև կամ ամպերի և երկրի միջև էլեկտրական լիցքերի պարպում է, իսկ ավելի պարզ ասած այն կարճատև էլեկտրական հոսանքի առաջացում է:



Կայծակները հաճախակի են լեռնային տեղանքում: Կայծակները ուղեկցվում են որոտով (ձայնային երևույթ):

Կայծակների երկարությունը երկրի և ամպերի միջև մինչև 2-3 կմ է, իսկ երկու ամպերի միջև՝ մինչև 50 կմ: Կայծակի պարպման տևողությունը 0,03-0,05 վայրկյան է:

Կայծակները ավելի հաճախ հարվածում են անհարթ կեղև ունեցող ծառերին (կաղնի), հողի խոնավ մասերին:

Կայծակնահար ծառը ձեղքվում է կամ բռնկվում:

Կայծակի ժամանակ չի կարելի մտնել մենավոր ծառի տակ կամ բարձր տեղում մնալ: Պետք է շտապ մտնել քարանձավ, անտառ (ոչ մենավոր ծառի տակ), հեռու մնալ գետի, լճի ափերից: Խոտի դեզի մեջ չպատսպարվել: Տանը գտնվելիս՝ փակել դռները, լուսամուտները, անջատել էլեկտրականությունը, չօգտվել ջրի ծորակներից:

Կայծակնահար մարդու մկանները կծկվում են: Հնարավոր են շնչառության դադարում, գիտակության կորուստ, նույնիսկ՝ կլինիկական մահ:

Կայծակի հպման տեղում մարմնի վրա առաջանում է այրվածք:

Անհրաժեշտ է արհեստական շնչառություն կատարել ու ուշքի բերելուց հետո շատ հեղուկ տալ:

Կայծակնահար մարդուն անհրաժեշտ է մեկուսացնել, գլուխը սառը ջրով ողողել, մարմինը փաթաթել սառը, թաց ծածկոցով և շտապ հասցնել բուժօգնության:

Իհարկե, այս ամենը պետք է կատարել մոտակայքում բժիշկ չլինելու կամ շտապ օգնություն կանչելու անհնարինության դեպքում:

ՍՈՂԱՆՔՆԵՐ

Սողանքը լանջի վրայի հողի, քարի զանգվածի սահքն է ծանրության ուժի ազդեցության տակ: Դրան նպաստում են տարբեր գործոններ:

Նախ, սողանքները լինում են ոչ բոլոր լանջերի վրա, այլ միայն անբարենպաստ պայմաններով լանջերի:

Օրինակ, քո համայնքի դիմացի սարի վրա մինչ այդ ոչ տուն են կառուցել, ոչ էլ գյուղատնտեսական մշակում կատարել: Օրերից մի օր համագյուղացիներից մեկն այդ լանջի վրա տուն է կառուցում՝ առանց նախօրոք տեղեկանալու լանջատակի հողերի հատկությունների մասին: Եվ ահա տունը կառուցված է: Լանջի վերին մասերից անձրևաջրերը, ձնաջրերը վար հոսելիս դեմ են առնում տան պատին: Ջրերի մի մասը շրջանցում է տունը, մյուս մասը ներթափանցում է շենքի տակ: Բայց արի ու տես, որ շենքի տակի հողերում 1մ խորության վրա մի տեսակի կավեր (կանաչավուն գույնի) կան, որոնք խոնավանալիս դառնում են օձառի նման լարծուն և մոմլաթի նման ջրանթափանց: Կավի շերտին հասած ջուրը հոսում է արդեն կավի վրայով: Բացի այդ, խոնավության հետևանքով լարծուն դարձած կավի մակերևույթի վրայով սկսում է սահել նաև տան 1 մ խորությամբ հիմնատակի հողը: Օրեցօր, տան տակի հողի ցած սահելու հետևանքով սկսում է քայքայվել կամ ցած սահել նաև տունը:



Այդպիսի անբարենպաստ պայմաններով լանջեր Հայաստանում շատ կան: Շատ հաճախ այդ մասին իմանում են լանջի վրա կառուցումներ իրականացնելուց, լանջը հերկելուց կամ հողը մշակելուց հետո:

Եթե քո կամ հարևան գյուղում տնամերձը ոռոգելու հետևանքով տունը սկսում է ձաքձքել և դեպի ցած սահել, նշանակում է լանջում անբարենպաստ հողեր կան: Ի՞նչ կարելի է անել նման դեպքում: Նախ՝ հողամասի վերին մասում ամուր հատակով առու բացել, որպեսզի վերևից հոսող ջուրը չլցվի հողամաս: Ոռոգումը պետք է կատարել ջրի խնայող ռեժիմով: Եթե այդ քայլերն օգուտ չտան, պետք է դիմել մասնագետին:

Սողանքավտանգ վայրերում պետք է աչալուրջ լինել լանջերի ձևափոխության նկատմամբ: Անձրևաջրերը, կոյուղաջրերը և այլ ջրեր պետք է հեռացվեն հատուկ խողովակաշարով:

Ամեն դեպքում, և՛ մեծերը, և՛ փոքրերը պետք է լինեն կարգապահ, օրինապահ: Առանց մասնագետի խորհրդի, թույլտվության և հսկողության չի կարելի սողանքավտանգ լանջերի վրա փոփոխություններ կատարել:



Ջերմուկի «Ձատիկ» մանկապարտեզի սան

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԵՄ, ՊԱՏՐԱՍԵՄ, ԿԱՐՈՂ ԵՄ...

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՌԻԴՅԱՆ, ԹԵՐԵԶԱ ԴԻԼԲԱՐՅԱՆ, ՍԻՐՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ՀԵԴԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ, ՌՈՒԴԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Խորհրդատու՝ ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝ ՇՈՒՇԱՆ ՄԱԿԱՐՅԱՆ
Նկարիչ՝ ՏԻԳՐԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

I KNOW, I AM PREPARED, I CAN...

Disaster Risk Reduction Book for Elementary School Students

By Anahit Aranudyan, Tereza Dilbaryan, Sirush Hovhannisyanyan,
Heghine Khachatryan, Rudik Alaverdyan
Consultant - Hamlet Matevosyan

EUROPEAN COMMISSION



Humanitarian Aid



Սույն ձեռնարկը մշակվել և տպագրվել է եվրամիության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված «Աջակցություն Հարավային Կովկասի խոցելի համայնքներում և հաստատություններում աղետների ռիսկերի նվազեցմանը» ծրագրի շրջանակներում:
Ձեռնարկում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել եվրամիության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեսակետին:

This publication has been produced within the framework of «Support Disaster Risk Reduction amongst Vulnerable Communities and Institutions in Southern Caucasus» project, funded by the European Union and implemented by the United Nations Children's Fund (UNICEF). The contents of this publication are the sole responsibility of the authors and can in no way be taken to reflect the views of the European Union and UNICEF.

Designed & Printed by "Printinfo", Yerevan, Armenia, www.printinfo.am

Ձևավորումը և տպագրությունը «Փրինթինֆո», www.printinfo.am